ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———— 2026թ. **N --- -Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով և 3-րդ կետով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N 93-Ն որոշմամբ՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված կազմակերպություններին՝ 2026 թվականի ընթացքում շարունակել հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղիների շահագործումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2026 թվականի ապրիլի____-ի
N ____-Ա որոշման

Ց Ա Ն Կ

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

	Դիմող	Ծառայողական ավտոկայանատեղի տարածքի հասցե	Կայանատեղում «ավտոտեղ»-երի քանակ (տարածքի չափեր) և կայանման ձև	Կազմակերպչի կողմից վճարված տեղական վճար	Այլ տրանսպորտային միջոցների կայանման սահմանափակում, աշխատանքային ռեժիմ	Ավտոկայանտեղի կազմակերպելու թույլտվության որոշման համարը
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**
1	«Շիրակ» ՍՊԸ	Խորենացու փողոց՝ հ.13ա հասցեի շենքին հարակից ճանապարհահատված	3 (22.5 գծմ) մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ ՝ մեկ շարքով	տարեկան	Սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շաբաթվա բոլոր օրերին, շուրջօրյա	2024 թվականի ապրիլի 16-ի N 118-Ա
2	«Կամ Դեվելոփմենթս» ՍՊԸ	Լեո փողոցի՝ հ.54 հասցեի շենքին հարակից ճանապարհահատված	3(22.5 գծմ) մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ ՝ մեկ շարքով	տարեկան	Սահմանափակմամբ, շուրջօրյա	2020 թվականի մարտի 19-ի N 209-Ա

3	«Բարսիս» ՍՊԸ	Դավիթ Անհաղթի փողոց՝ հ.21 հասցեի շենքին հարակից ճանապարհահատված	7(52.5 գծմ) մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ ՝ մեկ շարքով	տարեկան	Սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը ՝ շաբաթվա բոլոր օրերին, ժ. 09^{00}– 22^{00}	2021 թվականի սեպտեմբերի 14-ի N 440-Ա

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել համայնքի ղեկավարին՝ ավագանու որոշմամբ իրենց կողմից նշված տարածքում ավտոկայանատեղ նախատեսելու համար և վճարել ամսական կամ տարեկան տեղական վճար ամբողջ ավտոկայանատեղի տարածքի համար: Տեղական վճարի չափը հաշվարկվում է ըստ տվյալ ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցների կայանման տեղերի թվի և ավագանու կողմից սահմանված մեկ ավտոտրանսպորտային միջոցի դրույքաչափի:

2. Ավտոկայանատեղի ամբողջ տարածքի համար տեղական վճար վճարած ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունք չունեն ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:

ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝

ծառայողական ավտոկայանատեղ՝ ավտոկայանատեղ, որի կազմակերպման իրավունքը տեղական վճարի դիմաց հանձնված է որևէ իրավաբանական կամ ֆիզիկական անձի, որը կարող է սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունք չունի ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի ապրիլի 16-ի N 118-Ա, 2020 թվականի մարտի 19-ի N 209-Ա և 2021 թվականի սեպտեմբերի 14-ի N 440-Ա որոշումների հիման վրա ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման իրավունք ստացած իրավաբանական կամ ֆիզիկական անձինք, վճարելով սահմանված չափով տեղական վճարը, դիմել են կազմակերպված և գործող ավտոկայանատեղերը՝ համապատասխան իրատեսական տարածքում 2026 թվականի ընթացքում շահագործելու շարունակման իրավունք ստանալու խնդրանքով:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.93-Ն որոշմամբ սահմանվել է Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման կարգը:

Ելնելով վերոգրյալ իրավական ակտերի պահանջներից և սահմանված դրույթներից՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Կազմակերպված

ծառայողական ավտոկայանատեղի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ